# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

2-ը օգոստոսի 2017թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Գրիգորյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

*(Ա. Գրիգորյան)*

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Յուղերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Մոսէկքո» ՍՊԸ |
| 2 | «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ |
| 3 | «Հույս-Մոտոր» ՍՊԸ |
| 4 | «Ժակ և Գոռ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:.*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Գրիգորյան)

2.1 Թվով 4 մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Թվով 4 մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Ժակ և Գոռ» ՍՊԸ և «Հույս-Մոտոր» ՍՊԸ հայտերի ապահովումը բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով չեն ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը այդ մասնակիցների հայտերը մերժել է: «Մոսէսքո» ՍՊԸ և «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ մասնակիցների կողմից ներկայացրած բանկային երաշխիքից, որտեղ որպես բենեֆիցիար նշված էր ՀՀ ֆինանսների նախարարությունը: Գնահատող հանձնաժողովը նիստը կասեցրել է և 09.08.2017թ. եր ԴՎԱ/2647 գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը վերոնշյալ մասնակիցների հայտերը «դրական» կամ «բացասական» գնահատելու վերաբերյալ: Ի պատասխան 18.08.2017թ. 03/27-1/15198-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը նշել է, որ բենեֆիցիար է հանդիսանում կանխավճար նախատեսելու դեպքում: Մասնակիցները համաձայն ներկայացրած բանկային երաշխիքների 4-րդ կետի երաշխիք տվողի կողմից բենեֆիցիարին փոխել են և սահմանել ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակից.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվային գումարը | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումը | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | 2 | 3 | 4 | | 8 | 9 | 9.1 | 12 | 13 | 13.1 |
| 1 | Մինիրալյուղ՝ Մ6զ12Գ | կգ | 240,000 | 223,200,000 | Նախահաշվային գնից բարձր գին, միաժամանակյա բանակցություն | | | «Մոսէսքո» ՍՊԸ | 210,000,000 | 252,000,000 |
| | | | | | | | | «Ժակ և Գոռ» ՍՊԸ | 223,800,000 | 268,500,000 |
| | | | | | | | | «Հույս-Մոտոր» ՍՊԸ | 228,000,000 | 273,600,000 |
| 2 | Հակակոռոզիոն յուղեր /ՖՊ-10/ | կգ | 20,000 | 174,000,000 | «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ | 144,000,000 | 172,800,000 | «Մոսէսքո» ՍՊԸ | 158,500,000 | 190,200,000 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ յուղերի գնումն իրականացնելու համար կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով գնային առաջարկը գերազանցում է գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից , հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 05.09.2017թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) պետք է վարվեին միաժամանակյա բանակցություններ:Սակայն «Մոսէսքո» ՍՊԸ չի ներկայացել բանակցությունների, թողնելով առաջարկած գինը անփոփոխ:

1-ին չափաբաժնով գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգը հայտարարվեց չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

Քանի որ armeps.am էլեկտրոնային համակարգի խափանման պատճառով հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել էլեկտրոնային գնահատելու մրցույթը, ուստի 08.09.2017թ. եր ԴՎԱ/3004 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն մրցույթը փաստաթղթային շարունակելու վերաբերյալ և 11.09.2017թ. 03/26-2/16502-17 գրությամբ ստացել վերջինիս համաձայնությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

*(Ա. Գրիգորյան)*

4.1 **15.09.2017թ.** «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՆԱԿՕՅԼ» ՍՊԸ -ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարտքերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Ա. Գրիգորյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ստանալու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓԳ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Կ. Մխիթարյան

**Գնահատող** Գ. Ոսկանյան

**Գնահատող** Կ. Բրուտյան

**Գնահատող** Ա. Հակոբյան

**Գնումները համակարգող՝** Ա. Գրիգորյան